Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի 2013թ.-ի գործունեության համապատասխանության վերաբերյալ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի Խորհրդի կողմից հաստատված բանկի Ներքին աուդիտի 2013թ.-ի տարեկան Աշխատանքային ծրագրի համաձայն բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներում կատարված համալիր և նպատակային ստուգումների ընթացքում Ներքին աուդիտի կողմից իրականացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ստուգումների ընթացքում ուսումնասիրվել են բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին, բացահայտվել և գնահատվել են բանկում առկա ռիսկերը, բանկի կողմից դրանց կառավարման մակարդակը և ներքին հսկողության համակարգը:

Իրականացված աշխատանքները նպատակ են ունեցել ձեռք բերել բավարար հիմքեր, բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը արժանահավատ կերպով գնահատելու և համապատասխան եզրակացություն տալու համար:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ներքին աուդիտի կողմից իրականացված վերընշված միջոցառումները հիմք են տալիս եզրակացնելու, որ 2013թ.-ի գործունեության ընթացքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը ընդհանուր առմամբ համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ՝ **Արամ Խաչատրյան**

30.04.2014թ.